GEMEINDESCHULE
Rektorat

Gemeinde
HORW

Armenisch

Կարևոր ցուցում

Հարգելի ծնողներ և խնամակալներ,

Գերմաներեն լեզվի տիրապետումը Ձեր երեխայի/երեխաների դպրոցում հաջողության հասնելու կարևորագույն գործոններից է: Գերմաներեն լեզվի լավ գիտելիքները **շատ կարևոր հիմք** են նաև մասնագիտական աճի կամ միջնակարգ դպրոցներում հաջող մեկնարկի համար:

Դպրոցում օտարալեզու երեխաները գերմաներեն սովորելու հարցում արդյունավետ աջակցություն են ստանում «Գերմաներենը որպես երկրորդ լեզու» (DaZ) ծրագրի միջոցով: Սակայն, մենք պարզել ենք ենք, որ գերմաներենը սովորաբար բավականաչափ յուրացվում է միայն այն դեպքում, երբ **երեխաները <u>դպրոցից դուրս</u> հնարավորինս շատ են շփվում շվեյցարական գերմաներենի կամ գերմաներենի հետ:** Եվ այդ գործում երեխաները Ձեր օգնության կարիքն ունեն՝ որպես ծնողներ/ խնամակալներ: Ուստի խորհուրդ ենք տալիս, որ Ձեր երեխաները.

… իրենց ազատ ժամանակ ավելի հաճախ խաղան շվեյցարական գերմաներեն կամ գերմաներեն խոսող երեխաների հետ (1).
… օրվա մեջ այցելեն շվեյցարական գերմաներեն կամ գերմաներեն խոսող ընտանիքների(2).
… հաճախեն այնպիսի խմանքի կենտրոններ և արտադպրոցական կրթական հաստատություններ, որտեղ հիմնականում շվեյցարական գերմաներեն կամ գերմաներեն է խոսվում (3).
… ազատ ժամանակ ակտիվ այցելեն տեղի շվեյցարական սպորտային և երաժշտական խմբակներ (4).
… գրադարանից գրքեր վերցնեն ու կարդան (5)

Գերմաներենով ֆիլմերի և հեռուստահաղորդումների պասիվ դիտումը կարող է օգնել երեխաներին ավելի լավ հասկանալ գերմաներենը: Սակայն,որպեսզի Ձեր երեխան կարողանա լավ խոսել գերմաներեն և ավելի լավ տիրապետի դրան, գերմաներեն ֆիլմեր և հեռուստատեսային հաղորդումներ դիտելը բավարար չէ: Վերը թվարկված 1-5 կետերը շատ ավելի լավ ազդեցություն ունեն:

Սկզբունքորեն, շվեյցարական գերմաներենը կամ գերմաներենը նախքան մանկապարտեզ հաճախելը ամենահեշտն է սովորել: ՈՒստի եթե Դուք ունեք այս տարիքի երեխաներ նույնպես, ապա վերը նշված 1-3 կետերը առանձնահատուկ նշանակություն կունենան Ձեր փոքր երեխաների համար:

Շնորհակալություն Ձեր երեխաների ապագայի համար այս կարևոր տեղեկատվությունն ի գիտություն ընդունելու համար:

Horw-ի համայնքային դպրոց